ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

27 Հունիսի 2019 թ.
№ 9 (1043)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ» ԽՈՐԱԳՐՈՎ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հունիսի 24-ին կազմակերպվել էր «Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թվականներին» խորագրով գիտաժողով:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց ներկաներին, ապա քննարկվող թեմայի համատեքստում անդրադարձավ խորհրդահայ պատմագրությանը, որը Հայաստանի պատմագրությունը լուսաբանում էր որոշակի և սուբյեկտիվ, թեև այդ շրջանում լույս են տեսել նաև գիտական հետաքրքրություն ներկայացնող մի շարք գրքեր:

Գիտության կոմիտեի կողմից համալսարանում ստեղծված լաբորատորիան ուսումնասիրում է խորհրդահայ պատմությունը: Այդ խնդիրների մեկնաբանմանն էր միտված նաև ներկա գիտաժողովը:

Ռեկտորը մատնանշեց երեք կարևոր հանգամանք, որոնք առավել հետաքրքիր են դարձնում 1920-1930-ականների խորհրդահայ պատմությունը նորովի վերլուծելն ու պատմագիտական կարևոր նշանակության իրադարձություններն ու փաստերը գնահատելը. «Անցել են Հայաստանի անկախությանը հաջորդած էյֆորիկ տրամադրությունները: Մեր ժողովուրդը հասավ իր պատմական երազանքի իրականացմանը, սակայն պատմագիտական մտքում կային որոշակի տրամադրություններ, որոնք ժխտում էին այն ամենը, ինչ գոյություն ուներ խորհրդային պատմության շրջանում. դա նպաստավոր նախապայման է ներկայում ուսումնասիրություններ անելու համար: Երկրորդ հանգամանքն այն է, որ պատմաբանների մեջ շատ են ժամանակաշրջանի սերնդակիցները. ժամանակակիցը որոշակի շուք է հաղորդում պատմական անցքերին և ստեղծում անհրաժեշտ իրավիճակ:

ԽՍՀՄ-ի արդեն փլուզումից անցել է երեք տասնամյակ, սակայն հետխորհրդային երկրներում տեղի են ունենում տնտեսական-քաղաքական լուրջ գործընթացներ: Տարբեր քաղաքական ճամբարներում գտնվող և տարբեր դիրքորոշում ունեցող գործիչները արտասահմանյան երկրների օրինակներ են բերում, սակայն, առավել ճիշտ կլինի, եթե պատմական զուգահեռներ անցկացնենք մեր ժողովրդի 1920-1930-ական թվականների պատմության հետ»:

Ռեկտորն ընդգծեց, որ այսօր մեր կողքին աշխատում են 1920-1930-ականների շառավիղները՝ իրենց դրական և բացասական դրսևորումներով: Նրա կարծիքով՝ ուսումնասիրության ակտուալությունը հենց այս թեմաների առկայությունն է:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանի զեկուցումը վերաբերում էր Հայկական ազգային պետական կազմավորումների ձևավորմանը 1920-ական թվականներին:

Ա. Մելքոնյանը ներկայացրեց ստեղծված այն իրավիճակն ու հանգամանքները, որոնց պատճառով 1920-ական թվականների սկզբներին Խորհրդային Կովկասում ստեղծվեց նման պետաիրավական իրավիճակ, և մեկնաբանեց, թե արդյո՞ք կարող էր ստեղծվել մեկ այլ ազգային կառուցվածք, եթե չլինեին նախանշված իրավիճակն ու հանգամանքները:

Տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելով պատմությունը՝ ընդհանուր ուրվագծային պատկերն ունենալու համար սկսելով վաղ շրջանից, զեկուցողը հանգել է մի շարք հետաքրքիր հետևությունների, որոնք ներկայացրեց լսարանին:

«Տարածաշրջանի խորհրդայնացման խնդիրներին անդրադառնալիս պետք է սկսել 1920 թվականի գարնանից, երբ 11-րդ կարմիր բանակը, տանելով հաղթանակներ, աստիճանաբար մոտեցավ Անդրկովկասի սահմաններին, և, բնականաբար, առաջին հերթին, Ադրբեջանի սահմանները- ➤2

ՆԱԽԱՆՇՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռումինիայի Քենտեմիր համալսարանի նախագահ Ալեքսանդրու-Բոգդան Մուրգուն հունիսի 10-ին այցելեց Մանկավարժական համալսարան: Նշենք, որ «Cantemir» համալսարանը միակն է Ռումինիայում, որը հավաստագիր է ստացել Գերմանիայի առողջապահության և սոցիալական գիտությունների ակադեմիայի (AHPGS - Agentur im Bereich Gesundheit und Soziales) կողմից և բարձր գնահատականի արժանացել որակյալ կրթության համար:

Ռումինիայի Քենտեմիր համալսարանի նախագահը բուհում էր Մանկավարժական համալսարանի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աշոտ Խոյեցյանի և նույն ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանի՝ Գերմանիայի Քյոլն քաղաքում «EUROGEO» գիտաժողովի ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության շնորհիվ:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի հետ հանդիպման ընթացքում Ռումինիայի Քենտեմիր համալսարանի նախագահ Ալեքսանդրու-Բոգդան Մուրգուն խոսեց իրենց համալսարանի մասնագիտական ուղղությունների, առաջնահերթությունների մասին՝ փորձելով գտնել համագործակցության հնարավոր ուղիներ, միաժամանակ պատրաստակամություն հայտնելով բուհական տարբեր ուղղություններով գործակցելու համար:

ՀՊՄՀ ռեկտորը ռումինացի գործընկերոջը հանգամանորեն ներկայացրեց մեր համալսարանի գործունեությունն ու միջազգային կապերը, նաև ընդգծելով համալսարանի հետ համագործակցելու անհրաժեշտությունը: Ռուբեն Միրզախանյանը ռումինացի ռեկտորին հարցեր ուղղեց նրա ղեկավարած բուհի հետազոտական ձեռքբերումների, գիտակրթական հաջո- ➤2

ԵՐԵԽԱՆԵՐԸ ՄԵՐ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆ

Հունիսի 1-ը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրն է: Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնը, ինչպես ամեն տարի, այս անգամ էլ հանդես եկավ օրվա խորհրդին համահունչ նախաձեռնությամբ: Նախորդ տարիներին ուսանողները ներկայացնում էին մանկությանն ուղղված քարոզներ, լավագույններն արժանանում էին մրցանակների: Այս անգամ միջոցառումն անցկացվեց նոր ձևաչափով:

Պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը շնորհավորեց բոլորին տոնի առթիվ և հավելեց, որ երեխաներն իսկապես պաշտպանության կարիք ունեն: Դիմելով լսարանին՝ նա ասաց. «Այստեղ հավաքվել են երեխաների իրավունքների պաշտպանության համար բոլոր շահագրգիռ մարդիկ: Մենք բո- ➤4

Թշվառ է այն ազգը, որ չի մեծարում և ապահովում իր ուսուցչին: Ղազարոս ԱՂԱՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ...

➢1 րին: Մենք ընդհանուր տարածաշրջանի խորհրդայնացման խնդիրներին անդրադառնալիս, ցավոք, այնքան էլ շատ չենք անդրադարձել Ադրբեջանին, երբ որ դրանք պայմանավորեցին հետագա զարգացումները, և ազգային պետական կազմավորումների ձևավորման առումով Ադրբեջանի խորհրդայնացման գործընթացն ունեցավ իր հետևանքները»,-ասաց պատմաբանը:

Զեկուցողն ընդգծեց, որ Լենին-Քեմալ կապի մերձեցումն օգնեց Ադրբեջանի արագ և խաղաղ խորհրդայնացմանը: Ադրբեջանի մեջլիսի նիստում ընդունվեց ութ կետից բաղկացած մի համաձայնագիր-փաստաթուղթ, որի առաջին կետում ամրագրված էր. «Խորհրդային իշխանության ներքո անվերապահորեն պահպանվում է Ադրբեջանի անկախությունը, Խորհրդային Ռուսաստանը ամեն կերպ օգնում է Խորհրդային Ադրբեջանին՝ արտաքին թշնամիների դեմ պայքարում…»: Այդ արտաքին թշնամին մենք էինք: Համանման կետեր կային հետագայում նաև Երևանյան փաստաթղթում, որով խոստանում էին մեզ օգնել վիճելի տարածքների հարցում: Սրանով Ռուսաստանը Ադրբեջանին իբր թե ազատագրում էր մուսթաֆական նախկին ռեժիմից և խոստանում իր կազմի մեջ անկախություն: Սոցիալիստական անվան տակ Ռուսաստանը օկուպացրեց Անդրկովկասի բոլոր հանրապետությունները:

Զեկուցողն անդրադարձավ այդ տարիներին տարածաշրջանին առնչվող նորաստեղծ ռազմաքաղաքական դաշինքներին, Կարմիր բանակի գործողություններին, Սյունիքի, Արցախի, Նախիջևանի շուրջ տեղի ունեցող պատմաքաղաքական իրադարձություններին ու նրանց կարգավիճակներին:

Հայաստանը հռչակվեց

խորհրդային սոցիալիստական անկախ հանրապետություն՝ պահպանելով իր կարգավիճակը, թեև մենք ունեցանք տարածքային կորուստներ՝ Լեռնային Ղարաբաղ, Նախիջևան, Ախալքալաք, Ջավախք…

1920-1930-ական թվականներին մենք տարածքային կորուստներ ունեցանք, սակայն 1978 թ. Սահմանադրությամբ գոնե կարողացանք պահպանել մեր ունեցածը՝ տարածքային ամբողջականությունը, նաև ամրագրելով, որ Հայաստանի պետական լեզուն հայերենն է:

Եվ, վերջապես, այդ կազմավորումների հիման վրա հնարավոր եղավ 1991 թվականին կյանքի կոչել անկախ Հայաստանի վերաբերյալ հռչակագիրը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը ողջունեց գիտաժողովի անցկացումն ու թեմայի կարևորությունը՝ հավաստելով՝ «մեր պատմության այդ շրջանը շատ հետաքրքրական կողմեր ունի և նոր փաստերով բացահայտելու կարիք ունի»: Դ. Գասպարյանը հանգամանորեն անդրադարձավ 1920-1930-ական թվականների գրական խմբավորումներին և գրապայքարին: Նա խոսեց Նիկոլ Աղբալյանի գլխավորությամբ 1919-ին Երևանում, Դ. Վարուժանի կողմից Արևմտյան Հայաստանում և Փարիզում հիմնված «Մենք» գրական խմբավորումներին:

Հայաստանի խորհրդայնացման տարիներին ստեղծվեցին նոր գրական խմբավորումներ. «Երեքի դեկլարացիա», «Հոկտեմբեր», ապա՝ «Նոյեմբեր», «Ստանդարտ», «Աշխատավորական գրողների ասոցիացիա» և այլն:

Պետական քաղաքականությունը ձգտում էր այս բոլոր գրական խմբավորումների ու կազմակերպությունների միավորմանը: Ի վերջո ստեղծվեց Հայաստանի գրողների ֆեդերացիան:

«Ձևով ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական» կարգախոսին առաջադեմ գրողները հակադարձում էին «Ձևով ազգային, բովանդակությամբ՝ էլի ազգային» կարգախոսով: Հայ գրողների միջև պայքարը տարբեր ընդգրկումներ ունեցավ. առաջամարտիկներն էին Չարենցը և Բակունցը, որոնք ելութեր ունեցան ԽՍՀՄ համագումարում: Գրական պայքարը ԽՍՀՄ համագումարից հետո քաղաքական բովանդակություն ընդունեց:

Զեկուցողը 1936 թվականի օգոստոսի 9-ը համեմատեց 1915-ի Ապրիլի 24-ի հետ, որովհետև այդ օրը հայ գրողների մասսայական ձերբակալություններ իրականացվեցին:

Այս գրապայքարն ավարտվեց հայ գրականության եղերական էջով՝ Չարենցը դաժանաբար սպանվեց բանտում, Ա. Բակունցին գնդակահարեցին, Գ. Մահարուն, Մ. Արմենին և շատերին աքսորեցին:

ՀՀ Ազգային արխիվի տնօրեն, ՀՊՄՀ Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ամատունի Վիրաբյանը հանդես եկավ «Ներկուսակցական պայքարը Խորհրդային Հայաստանի իշխանությունների վերնախավում 1920-1930-ական թվականներին» զեկուցումով:

Ա. Վիրաբյանն ասաց, որ Խորհրդային տարիների պատմությունը բավականին ուսումնասիրված է, պետք է տալ այդ տարիների օբյեկտիվ գնահատականը: Փաստաթղթերը շատ են, համախմբված և միասնական աշխատելու դեպքում կարելի է սրբագրել պատմությունը:

Զեկուցողը բարձրաձայնեց՝ այդ տարիներին ամենաբարդը մարդկային հարաբերություններն էին: Նա հիշեցրեց, որ Անդրկովկասյան ֆեդերացիայի շրջանում հայկական հարցերը լուծվում էին ոչ թե Մոսկվայում, այլ Թբիլիսիում: Մեղադրելով մեր իշխանավորների անմիաբանությունը՝ նա միայն մեկ հարցի լուծում մատնանշեց, այն, որ Լոռին տրվեց Հայաստանին:

Անդրադառնալով Հայաստանի ներքին քաղաքական կյանքին, անմիաբան ղեկավարներին՝ նա ամփոփեց՝ Խորհրդային Հայաստանի քաղաքական կյանքում պայքարը միշտ եղել է, բոլոր ժամանակներում, նաև հետպատերազմյան տարիներին, ցավոք՝ ոչ գաղափարի շուրջ, որի բացասական ազդեցություն են կրել նաև գրողները:

Քննարկումները շատ հետաքրքիր և արդիական հարցերի շուրջ շարունակվեցին առաջին և երկրորդ բաժանմունքներում, ուր զեկուցողներ Հայկ Գրիգորյանը, Անի Խաչատրյանը, Արսեն Հակոբյանը, Ավագ Հարությունյանը, Էդգար Հովհաննիսյանը, Արման Մալոյանը, Սամվել Մկրտչյանը, Էդիկ Գևորգյանը, Արմինե Եփրիկյանը, Գևորգ Կեսոյանը, Տաթևիկ Մանուկյանը, Արման Մարտիրոսյանը, Նելլի Մինասյանը, Աշոտ Շահինյանը և Խաչատուր Ստեփանյանն անդրադարձան 1920-1930-ականների Խորհրդային Հայաստանի մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի առանձին դրվագներին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

...ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

➢1 ղությունների, միջազգային գիտաչափական ամսագրերում տպագրվելու փորձի վերաբերյալ:

Ներկայացնելով հատկապես զբոսաշրջության զարգացման ոլորտում իրենց բուհի հետաքրքիր փորձի ու ձեռքբերումների մասին հետաքրքիր տեղեկություններ՝ Ալեքսանդրու-Բոգդան Մուրգուն վստահեցրեց, որ երկուստեք կնախանշեն առաջիկա համագործակցության ուղղությունները:

Օնլայն քննարկում

Հունիսի 6-ին կայացավ ԱՊՀ մասնակից-պետությունների և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մանկավարժական բուհերի Հանրային խորհրդի երրորդ տեսակոնֆերանսը:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը տեսակոնֆերանսի աշխատանքներին մասնակցեց օնլայն՝ տեսակապի միջոցով: Նիստին մասնակցում էին ԱՊՀ մասնակից-պետությունների և ՉԺՀ մանկավարժական բուհերի ռեկտորներ, կրթության թվայնացման փորձագետներ, կրթական համակարգերում թվային տեխնոլոգիաների ճանաչված մասնագետներ: Քննարկվեցին ԱՊՀ մասնակից պետությունների և ՉԺՀ ընդհանուր կրթական տարածքում մանկավարժական կրթության համակարգի թվայնացման և մանկավարժական կրթության բովանդակության հիմնախնդիրներ:

Կոնֆերանսը վարում էր ԱՊՀ մասնակից պետությունների և ՉԺՀ մանկավարժական բուհերի Հանրային խորհրդի նախագահ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսեյ Լուբկովը: Նա Խորհրդի մասնակիցներին ներկայացրեց թվային տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված մանկավարժական կրթության անդադար զարգացման հիմնահարցերը: Նիստում քննարկվեցին նաև «ԱՊՀ երկրներում մանկավարժական կադրերի պատրաստման ազգային համակարգ» զեկույցի կառուցվածքի նախագծի վերաբերյալ մի շարք հարցեր:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց տեսակոնֆերանսի մասնակիցներին և կարևորելով Հանրային խորհրդի՝ մանկավարժական կադրերի պատրաստման ազգային միասնական համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը՝ վստահեցրեց, որ հայեցակարգը կքննարկվի բուհի Գիտական խորհրդի առաջիկա նիստում:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Քիչ է ասել, թե Թումանյանը հանճարեղ բանաստեղծ է. նա հոգեկից գրող է, որի հետ ապրում ես կյանքիդ յուրաքանչյուր օրը: Մեծ լոռեցու բանաստեղծությունները տիեզերական աշխարհ են հիշեցնում, որտեղ մարդը շարունակ պայքարի մեջ է՝ ապրելու, նոր ձևեր հայտնաբերելու, սիրելու և լռելու տեսադաշտում:

Հունիսի մեկը օրացույցի մեջ վառ է նշված, քանի որ այդ օրը երեխաների պաշտպանության, նրանց իրավունքների վերհանման և անհոգ ու երջանիկ մանկության ապահովման երաշխիքն է: Թումանյանը երեխաների մասին շատ է գրել ու գրել է խոր հիացմունքով՝ փորձելով նրանց միջոցով դասեր տալ համայն մարդկությանը: Եվ հենց այսօր՝ հունիսի մեկին, ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը կազմակերպել է գիտաժողով՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյակին:

Ճանապարհը Երևանից ուղիղ ու թեթևակի թեքությամբ մեզ տանում է թումանյանական աշխարհ, որը Լոռին է՝ իր անկրկնելի թարմությամբ, անտառաշատ լեռներով ու խորհրդավոր բնությամբ: Մեր այցն էլ խորհրդավոր է, որովհետև Թումանյանի մասին վերստին խոսելու ենք հունիսի մեկին. օրվա հերոսներին, այսինքն՝ մանուկներին նա ձոնել է բազում հեքիաթային ստեղծագործություններ:

Ցուցանակը մեզ հուշում է, որ հասել ենք Դսեղ: Գյուղը բոլորովին նման չէ մարզի մյուս համայնքներին. այստեղ կանգ է առել ժամանակի սլաքը, տեղացիներն ամենօրյա աշխատանքով, մարդկային հարաբերություններով միշտ վառ են պահում Թումանյանի շունչը: Բանաստեղծի պատկերած Լոռին, անզուգական դաշտերը, թավ բնությունը, ժայռերն ու ձորերը երկխոսության մեջ են բոլորի հետ ու ապրում են, ապրում անվերջ:

Դսեղ հասնելուն պես հայտնվում ենք գյուղի կենտրոնում, որտեղ գտնվում է հանճարեղ լոռեցու տունը՝ հնամենի ու կիսով չափ նորոգված: Մեզ դիմավորում է տուն-թագարանի տնօրենը, ծանոթացնում է Թումանյանի տանը, բացահայտում բանաստեղծին որպես գյուղացու, ներկայացնում նրան որպես հայի, ամբողջացնում նրա կերպարը որպես մտավորականի և որպես առհասարակ գրական-հասարակական գործչի ու գրականագետի:

Տեսնում ենք փոքրիկ օթախները, որտեղ ապրել է գրողը, ծանոթանում պահպանված իրերին, ասմունքում քառյակներ, լցվում Թումանյանին բնորոշ խինդով ու ջերմությամբ:

Թանգարանը դիտելուց հետո շտապում ենք բակ, որտեղ կանգնեցված է մի մատուռ, որում ամփոփված է բանաստեղծի սիրտը: Խոնարհումից հետո սկսում ենք գիտաժողովը:

Պրոֆեսոր Ա. Դոլուխանյանը շնորհակալություն է հայտնում թանգարանի տնօրենին ջերմ ընդունելության համար ու նկատում՝ Թումանյանը հայի իսկական տեսակն է: Բանաստեղծի տունը մարդաշատ է. այս փաստը երջանկացնում է պրոֆեսորին. «Ուրեմն ամեն ինչ առջևում է»:

Իրենց զեկուցումներով ներկաներն անդրադարձան Թումանյան աշխատավորին, մանկագրին, հայրենասերին, բանաստեղծին ու արձակագրին: Նրանք նոր դիտանկյունից հայտնաբերեցին մտավորականի կերպարը՝ անբացատրելի ու անիմանալի հպարտությամբ խոսելով գրողի ազգային-հասարակական գործունեության, նրա անձնական ու անանձնական ապրումների, փափագած երազների մասին:

Գիտաժողովի ավարտին պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը թանգարանին նվիրեց արժեքավոր գրքեր ու ամփոփեց. «Թումանյանն ապրելու է հավերժ, քանի դեռ աշխարհի որևէ ծայրում ապրում է հայն ու արարում»:

Զեկուցողները ներկայացրին որոշ առնչություններ գրողի ստեղագործությունների ու բանահյուսության միջև՝ փաստելով, որ բանաստեղծի համար բանահյուսությունը անկրկնելի մի աշխարհ է:

Օրն ավարտեցինք Դեբեդի ափերին՝ ունկնդրելով նրա խոխոջուն ձայնն ու վայելելով բնությունը:

Կարլեն ՆԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս

«Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման թեստավորման կենտրոնում

Երևանում ապրիլի 13-ին գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի կողմից կազմակերպվել էր «Համընդհանուր թելադրություն» միջազգային կրթական ձեռնարկը, որի անցկացման հարթակ էր նաև Մանկավարժական համալսարանը: Միջազգային կրթական ակցիային Մանկավարժական համալսարանում մասնակցել են բուհի Օտար լեզուների 1-4-րդ կուրսերի շուրջ 50 ուսանողներ, տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ:

«Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման թեստավորման կենտրոնում հունիսի 5-ին ամփոփեցին միջազգային «Համընդհանուր թելադրության» արդյունքները:

«Համընդհանուր թելադրության» համակարգող Սոնա Սարաջյանը և լրագրող, գրող Ելենա Շուվաևա-Պետրոսյանը շնորհակալություն հայտնեցին համալսարանի ղեկավարներին՝ միջազգային ակցիան բարձր մակարդակով կազմակերպելու, իսկ ուսանողներին՝ պատշաճ մասնակցության համար: Նրանք կազմակերպիչներին և ուսանողներին հավաստագրեր ու շնորհակալագրեր հանձնեցին՝ վստահեցնելով, որ սա սեփական հնարավորությունները դրսևորելու լավագույն հարթակ էր, որ թելադրություն միջազգային ակցիային մասնակցած ուսանողները համարձակ են ու տաղանդավոր:

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը շնորհավորեց մասնակիցներին, խրախուսեց ակցիային մասնակցելու քայլը և հետագա հաջողություններ մաղթեց:

Այնուհետև Մանկավարժական համալսարանի «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման թեստավորման կենտրոնի լսարանում ռուսաց լեզվի ամբիոնի ուսանողները ներկայացրին գրական ցերեկույթ՝ նվիրված ռուս և համաշխարհային ճանաչում ունեցող բանաստեղծ, գրող, ժամանակակից գրական ռուսերենի ստեղծող Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի ծննդյան 220-ամյակի կապակցությամբ: Ուսանողները ներկայացրին Ա. Ս. Պուշկինի կենսագրության կարևորագույն դիպվածները և գրական գործունեությունը, ասմունքեցին՝ պուշկինյան պոեզիայի վեհությունն ու մաքրությունը փոխանցելով ներկաներին, ապա անցկացրին ֆլեշմոբ. ներկաներից յուրաքանչյուրը մեկական քառատող արտասանեց Պուշկինի հանրահայտ բանաստեղծություններից:

Տարին հոբելյանական է. հանրությունը նշում է ռուս հայտնի բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Ա. Ս. Պուշկինի ծննդյան 220-ամյակը: Որքա՜ն բնութագրական են Բելինսկու և Գոգոլի տողերը Պուշկին երևույթի մասին: «Պուշկինը պատկանում է հավիտյան ապրող և հարաշարժ երևույթների թվին, որոնք կանգ չեն առնում այն կետի վրա, որտեղ վրա է հասել մահը, այլ շարունակում են զարգանալ հասարակության գիտակցության մեջ»,-գրել է Բելինսկին, իսկ Նիկոլայ Գոգոլն ասել է. «Նրա մեջ ռուսական բնությունը, ռուսական հոգին, ռուսաց լեզուն, ռուսական բնավորությունն արտացոլվել են նույնպիսի մաքրությամբ, նույնպիսի զտված գեղեցկությամբ, որով լանդշաֆտն արտացոլվում է օպտիկական ապակու ուռուցիկ երեսին»:

Հայ մեծ պոետ Եղիշե Չարենցի բնութագրմամբ «Պուշկինը համաշխարհային գրականության բանաստեղծական արեգակն է... պոետներից ամենապայծառն ու վսեմը»:

Նա ծնվել է 1799 թվականի հունիսի 6-ին, Մոսկվայում: Սովորել է Ցարսկոյե Սելո լիցեյում, բացառիկ սեր տածել դեպի ռուս և ֆրանսիական պոեզիան:

Խորհրդանշական են հենց իր՝ Ա. Ս. Պուշկնի հետևյալ տողերը. «Ասում են՝ դժբախտությունը թերևս լավ դպրոց է: Բայց երջանկությունն էլ լավագույն համալսարանն է»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՆՎԻՐՎԱԾ ԷՐ Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻՆ

Մանկավարժական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի և քիմիական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Աշոտ Բաբախանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Ա. Ս. Պուշկինի 220-ամյակին նվիրված միջոցառում, որին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, հյուրեր Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնից:

Ելույթ ունեցավ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռուզան Թադևոսյանը, որը ողջունեց ներկաներին և փաստեց, որ բանաստեղծի, «թռիչքի հանճարի» մասին հաստատում է Պուշկինի ներկայության անհրաժեշտությունը մեր ժամանակներում, նրա ժառանգության արդիականությունը:

Աշոտ Բաբախանյանը ներկայացրեց Պուշկինին նվիրված նամականիշներից պատրաստված վահանակը, որի մի մասը կազմում էին նաև հայ գրողներին նվիրված նամականիշները և նրանց ասույթները ռուս բանաստեղծի մասին:

Ցերեկույթն ամփոփվեց Ա. Ս. Պուշկինի բանաստեղծությունների ընթերցանությամբ:

ԵՐԵԽԱՆԵՐԸ ՄԵՐ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆ

➢1 լորս երկու առաքելություն ունենք՝ լինել լավ մասնագետ և սատար կանգնել երեխային»:

Նախ երեխաների իրավունքների շրջանակներում իրականացրած իրենց հետազոտությունների արդյունքները ներկայացրին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի հեռակա ուսուցման բակալավրիատի սոցիալական մանկավարժություն մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողներ Աշխեն Սագսյանը և Անահիտ Հայրապետյանը, այնուհետև մանկությանն ուղղված իրենց քարոզները ներկայացրին մանկավարժական համահամալսարանական օլիմպիադայում հաղթած քարոզների հեղինակներ Նարինե Թաթոյանը, Շուշանիկ Աբովյանը (Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրս) և Անահիտ Ադամյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրս):

Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհիներ Մարգարիտա Աբգարյանը և Արաքսյա Մուրադյանը ներկայացրին աշխարհի տարբեր երկրներում

երեխաների դաստիարակությանը և իրավունքների պաշտպանությանը վերաբերող հետաքրքիր փաստեր:

Ուսանողները նաև ներկայացրել էին «Մանկության հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում» խորագրով թեմատիկ և հեղինակային լուսանկարներ. դահլիճում ներկա գտնվողները և ժյուրին քվեարկությամբ ընտրեցին լավագույն հիմնախնդիրներն արծարծող լուսանկարները:

Հեղինակային լուսանկարների մրցույթում 1-3-րդ տեղերը համապատասխանաբար գրավեցին Հեղինե Թումանյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրս), Մերի Աղաջանյանը (Կուլտուրայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրս) և Վիկտորյա Հովհաննիսյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրս):

Թեմատիկ լուսանկարների մրցույթի լավագույններն էին Լիանա Նիկողոսյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի 1-ին կուրս), Անի Դանիելյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրս) և Լուսինե Սարգսյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրս):

Սկզբնական կրթության երգչախումբը (դիրիժոր՝ Վաչագան Նավասարդյան) մանկական երգերի կատարումներով եզրափակեց միջոցառումը:

Պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց մանկության հիմնախնդիրներին նվիրված միջոցառումը՝ առաջ քաշված հարցադրումներով և լուծման առաջարկներով, ապա շնորհավորեց ուսանողներին և դասախոսներին հերթական հաջողված նախաձեռնության համար՝ ուսանողներին հանձնելով մրցանակներ և հավաստագրեր:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Ուսուցիչը մեր շրջանավարտն է

ԱԿԱՆՋԱԼՈՒՐ ԵՂԵՔ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Աշխարհագրությունն այն եզակի բնագիտական առարկաներից է, որը մշտապես զարգանում է, փոփոխվում, գիտություն, որը բացահայտում է մարդու և բնության միջև գոյություն ունեցող բազմաբնույթ կապերը: Սակայն ինչպես յուրաքանչյուր գիտություն, աշխարհագրությունը նույնպես ունի իր ուսումնասիրության յուրահատկությունները, հակասությունները:

Ցանկացած աշակերտ, ուսանող ուսումնառության ընթացքում հանդիպում է այդ բաղադրիչներին: Լինելով Մանկավարժական համալսարանի շրջանավարտ, այժմ՝ աշխարհագրության ուսուցչուհի, ինձ մշտապես մտահոգել են այն խնդիրները, որոնք ծագել են սովորողների և դասավանդողների միջև, անհամապատասխանությունները ներկայացվող դասագրքերի և ուսումնական ծրագրերի միջև: Միշտ չէ, որ դպրոցական դասագրքերն ամփոփ ու ճշգրիտ տեղեկություն են տալիս այս կամ այն աշխարհագրական օբյեկտների կամ պատմական, քարտեզագրական երևույթների մասին: Դժգոհությունդ կրկնապատկվում է, երբ դասագրքի էջերում հանդիպում ես մասնագիտական սխալների, ժամանակագրական անհամապատասխանությունների, խիստ գիտական տերմինների, քարտեզագրական բարդ վերլուծությունների և անորոշ հավասարումների համակարգերի: Արդյոք ժամանա՞կը չէ բեռնաթափելու դասագրքերը, աշակերտներին մատուցելու ավելի պարզ, ընկալելի և դյուրին բովանդակությամբ դասագրքեր, մանավանդ երբ աշխարհագրություն առարկային հատկացված ժամաքանակն օրեցօր պակասում է: Փաստեմ, որ եվրոպական շատ երկրներում և ՌԴ-ում պետական մակարդակով աշխարհագրությանը հատկացված ժամերը վերջին տարիներին ավելացել են: Կարծում եմ՝ շատերի մտահոգության առարկան է այս փաստը, և իմ խորին համոզմամբ, ցանկալի արդյունք ստանալու համար պետք է փոփոխությունը սկսել դասագրքերից:

Կարևոր են նաև չափորոշիչները, որոնք պետք է համապատասխանեն դասագրքերի բովանդակությանը: Ինչ խոսք, այս շարքում ամենակարևորն ու ամենահիմնականը ուսուցիչն է, գոնե իմ սերնդի դպրոցականների համար՝ կիսաստված, ում դպրոցից դուրս տեսնելը մեզ համար յուրահատուկ իրադարձություն էր: Այսօր էլ շատ ուսուցիչներ, հերոսաբար հաղթահարելով շատ խոչընդոտներ, շարունակում են մնալ այդ պատվավոր բառի իմաստի արժանապատիվ կրողները, մարդիկ, որոնք արժանի են մնացել իրենց կոչմանը: Իհարկե, մեր օրերում շատերն են դժգոհ դպրոցից, ուսուցիչներից: Երբեմն ինքներս մեզ հարց ենք տալիս՝ ինչից է հյուսվում մեր՝ ուսուցչի կերպարը, ինչ ակունքներից են սնվում նրա գիտելիքները, եռանդը, ձգտումները: Եթե այս բաղադրիչները տարիներ շարունակ անտեսվել են, ուսուցչի կերպարը նսեմացվել է, չի գնահատվել, մի՛ շտապեք մեղադրել նրան: Ընդամենն ականջալուր եղեք ուսուցիչների բազմահազարանոց բանակի կողմից բարձրացրած խնդիրներին, որոնք անհապաղ լուծումներ են պահանջում:

Լրացուցիչ թղթաբանությունը, ծանրաբեռնվածությունը և ժամանակային ծախսերը նույնպես անդրադառնում են ուսուցչի հեղինակության նկատմամբ հարգանքի դրսևորման վրա: Իհարկե, երբեմն որոշ ուսուցիչների հետ շփվելով՝ դառնանում ես նրանց իմացական աղքատության, գիտելիքների սահմանափակության վրա: Սակայն մեր կյանքում շտկելու շատ բացթողումներ կան: Այդ ընդհանուր ծանր վիճակից պիտի դուրս գանք բոլորս միասին՝ չփնտրելով մեղավորներ և մեղադրողներ:

Զարուհի ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արարատի մարզի Նոր Խարբերդի №2 միջն. դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի

«Մաթեմատիկական կրթության լեզուն և խոսքը»



Քիչ աշխատանքներ են ստեղծվել մեզանում, որոնք առանցքային նշանակություն են ունեցել գործառման տարբեր ոլորտներում՝ հայոց լեզվի կիրառական լայն հնարավորությունները բացահայտելու առումով: Այդ նշանակությունը երիցս զորանում է, երբ աշխատանքը կատարվում է իր գործն իմացող և հայերեն խոսքի ներքին հնարավորությունները զգացող ու դրանք ըստ ամենայնի յուրացրած մեկի կողմից: Հենց այդ կարգի ուսումնասիրություն է մանկավարժական գիտությունների դոկտոր Համլետ Միքայելյանի հեղինակած «Մաթեմատիկական կրթության լեզուն և խոսքը» աշխատանքը:

Մեզանում մասնագիտական գրականությունը, լինի դա իրավագիտություն թե բժշկագիտություն, մաթեմատիկա թե տնտեսագիտություն կամ այլինչ, լուրջ խնդիր ունի հանրության մեծ լսարանին ընկալելի, հասկանալի լինելու: Խնդիրը է՛լ ավելի է բարդանում, երբ վերաբերում է մասնագիտական այդ գրականությունը պարզ, մատչելի և հետաքրքիր մատուցելուն: Տասնամյակներ շարունակ նշված և այլ ոլորտներում ունենալով թարգմանական գրականության լեզվական ճախորդ ազդեցությունները՝ մասնագիտական խոսքը հայերենում բավարար չափով չի մշակվել, ու չեն բացահայտվել նրա հնարավորությունները: Հ. Միքայելյանի այս գործը վառ ապացույցն է այն բանի, որ գործով մտահոգ, բազմափորձ ու բանիմաց գրչի տակ հայերենը կարող է դառնալ առարկան ուսումնասիրող ու մատուցող լեզվի տիպական օրինակ:

Գրքի հեղինակը անդրադարձել է մաթեմատիկական կրթության դաշտում հայերենի գործառության գրեթե բոլոր երեսներին՝ սկսած մաթեմատիկական լեզվի այսպես կոչված լեզվաբանական և խոսքային բնութագրումներից (լեզու/խոսք և հոգեբանական գործընթացներ, մաթեմատիկական մտածողություն և տրամաբանական խոսք) մինչև լեզվի և խոսքի արժեբանական կարգերի (տարբեր մոտեցումներ լեզվի և խոսքի վերջնարկային, ազգային և կրթական արժեքներ) քննարկումներ, մինչև հայոց լեզվի մաթեմատիկական՝ երկրաչափական և հանրահաշվական գեղեցկությունների յուրօրինակ բացահայտումներ:

Հ. Միքայելյանի «Մաթեմատիկական կրթության լեզուն և խոսքը» աշխատանքը կարող է դառնալ ոչ միայն մասնագիտական լսարանի՝ մաթեմատիկոսների և լեզվաբանների, այլև յուրաքանչյուր հայ գրագետ մարդու սեղանի գիրքը:

Յուրի ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Հայաստանը կարելի է համարել մեծ հեռանկարներ ունեցող սոցիոլոգիական լաբորատորիա»

Մեր հարցազրույցը ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյանի հետ:

- Պարոն Սահակյան, սոցիոլոգիական գիտությունը մեզանում կայացա՞ծ է, ոլորտում հրատապ լուծում պահանջող ի՞նչ խնդիրներ կան:

- Սոցիոլոգիան ոպես գիտություն հայ հասարակության մեջ զարգացել է վերջին 30 տարիների ընթացքում: Կարծում եմ Հայաստանում ավարտվել է ձևավորման փուլը, սակայն, եթե համեմատենք այլ երկրների հետ, մեզանում սոցիոլոգիայի կայացման և զարգացման համար համապատասխան պայմաններ չկան կամ, կարելի է ասել, բավարար չեն:

Ժամանակակից աշխարհի տարբեր երկրներում այսօր արագ զարգանում են, սոցիոլոգիայի բոլոր ուղղությունները, սակայն, պետք է նկատել, որ Հայաստանում առավել զարգացած են քաղաքական և տնտեսական սոցիոլոգիական ուղղությունները: Ցավալի է, որ շատերը սոցիոլոգիան կապում են միայն քաղաքականության կամ հարցումների հետ: Սոցիոլոգիան և՛ պրակտիկ, և՛ տեսական հարուստ հիմքեր ունի: Ինչպես ասում էր իմ գիտական ղեղավարը՝ «Հայաստանը կարելի է համարել մեծ հեռանկարներ ունեցող սոցիոլոգիական լաբորատորիա»:

- Մանկավարժական համալսարանում Դուք ղեկավարում եք սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնը. ի՞նչ աշխատանքներ են տարվել այդ ընթացքում և ի՞նչ ծեռքբերումներ ունեք:

- Ամբիոնի դասախոսների համար առաջնայինը հայ հասարակության տարբեր շերտերում սոցիոլոգիայի, ինչու չէ, նաև սոցիալական աշխատանք մասնագիտության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացման խնդիրն է: Զարմանալի է, բայց պետք է փաստել, որ շատերն իրարից չեն տարբերում սոցիոլոգին, հոգեբանին և սոցիալական աշխատողին:

Այսօր Հայաստանում սոցիոլոգիական գիտական աստիճան ունեցող մասնագետները բավականին քիչ են, իհարկե, կան նաև հարուստ պրակտիկ փորձ ունեցող մասնագետներ, սակայն տեսականորեն հարուստ գիտելիքներով սոցիոլոգներ պատրաստելու համար պետք է համադրել պրակտիկ և մասնագիտական ունակությունները և ցենզը: Հայաստանյան այս ոլորտում կան սոցիոլոգների վարքային նմուշների դաստիարակման, կորպորատիվ մշակույթի փոփոխության, հայերեն լեզվով սոցիոլոգիայի դասագիրք-ծեռնարկի ստեղծման, դպրոցներում այս մասնագիտության մասին իրազեկման և բազմաթիվ այլ խնդիրներ:

Սոցիոլոգիական դպրոցը ավելի զարգացնելու և նոր հիմքերի վրա ամրացնելու համար անհրաժեշտ է պարբերաբար անցկացնել վարպետության դասեր, բայց այդ դասերի անցկացման համար պետք է հնարավորություններ ու ռեսուրսներ ներդնել...

- Որքան տեղյակ եմ, ամբիոնը ակտիվ աշխատանքներով համագործակցում է տարբեր երկրների բուհերի մասնագետների հետ, կազմակերպում միջազգային գիտագործնական գիտաժողովներ և կլոր սեղաններ: Ի՞նչ արդյունքներ են գրանցվել:

- Մինչև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ դառնալը ես աշխատել եմ Ռուսաստանի Դաշնությունում, Հայաստանի տարբեր բուհերում թե՛ որպես դասախոս, թե՛ որպես ամբիոնի վարիչ: Մասնագիտական ոլորտում աշխատում եմ շուրջ 25 տարի, որի ընթացքում ծեռք եմ բերել համեստ փորձ և գիտական միջավայր. իմ ընկերները ոլորտի ճանաչված մասնագետներ են, որոնք աշխատում են տարբեր երկրների հայտնի բուհերում: Սանկտ Պետերբուրգում ուսանողից հասել եմ դոկտոր, պրոֆեսորի աստիճանի: Այս ամենն ինձ հնարավորություն են ընձեռել Մանկավարժական համալսարանում երկու տարվա ընթացքում կազմակերպել գիտական կոնֆերանսներ, քննարկումներ, սոցիոլոգիական մարաթոն, սոցիոլոգիական լսումներ, դասախոսություններ տարբեր երկրների առաջատար մասնագետների մասնակցությամբ, ուսանողների շրջանում՝ գիտական հոդվածների մրցույթներ, միջբուհական պայմանագրեր կնքել Ռուսաստանի Դաշնության և Լեհաստանի բուհերի հետ, Սանկտ Պետերբուրգում հրատարակվող գիտական հոդվածների պարբերականում պարբերաբար հոդվածներ տպագրել:

Աշնանը պատրաստվում ենք կազմակերպել միջազգային սոցիոլոգիական ընթերցումներ, նաև ամբիոնին կից ձևավորել սոցիոլոգիական լաբորատորիա. դա ուսանողների համար կդառնա պրակտիկ գործունեության հարթակ:

- Հայաստանում մինչև այսօր չկա հայերեն լեզվով գրված Սոցիոլոգիայի հիմունքներ վերնագրով դասագիրք, կա ռուսերենից թարգմանված մեկ ծեռնարկ, որը չի կարող ներկայացնել Հայաստանի հասարակության սոցոլիոլոգիական առանձնահատկությունները:

- Այո, ճիշտ նկատեցիք, Հայաստանում հայերեն լեզվով դասագրքեր չկան. դրանք հիմնականում ռուսաց և անգլերեն լեզուներով են: Հայերեն լեզվով բուհական դասագրքի ստեղծման անհրաժեշտությունն օրվա հրամայական է, և կարծում են Հայաստանի լավագույն մասնագետներն այս ուղղությամբ պետք է համատեղեն իրենց գիտելիքներն ու ջանքերը:

- Ինչպիսի՞ն է այս գիտական ոլորտի ներկան և ապագայի ի՞նչ ակնկալիքներ ունեք...Ուսանողները հետաքրքրվա՞ծ են առարկայով և ուսման ի՞նչ առաջադիմությամբ են աչքի ընկնում...

- Սոցիոլոգիան ունի մեծ ապագա, այն ուսումնասիրում է մարդու կյանքը: Սոցիոլոգիային տիրապետող յուրաքանչյուր մարդ կարող է գրագետ և ճիշտ կողմնորոշվել հասարակական հարաբերություններում:

Պետք է նկատել, որ մեր ուսանողներն ունեն տեսական գիտելիքներ, բայց կաշկանդված են, չունեն պրակտիկ փորձ, սահմանափակ են իրենց քայլերում ու որոշումներում: Ակտիվ են այն ուսանողները, ովքեր շփումներ ունեն առաջատար այլ բուհերի ուսանողների հետ: Այդպիսիները փորձում են արագ հարմարվել առկա իրավիճակին և հարթել իրենց մասնագիտական ուղին, ցավոք, մյուսները, որոնք միայն մտածում են սովորելու և դիպլոմ ստանալու մասին, հիմնականում ունենում են դժվարություններ բուհն ավարտելուց հետո՝ աշխատանք փնտրելիս, կայացման ուղին հարթելիս և այլն :

- Երկար տարիներ Դուք դասավանդել եք Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանում. երկու բուհերի սոցիոլոգիական կրթության դասավանդման մեջ ի՞նչ նմանություններ ու տարբերություններ եք տեսնում:

- Սանկտ Պետերբուրգում կան սոցիոլոգիական դպրոցներ, լաբորատորիաներ, ինստիտուտներ, իսկ ՀՀ-ում՝ լավ երիտասարդ կադրեր և խելամիտ ուսանողներ... Եթե հնարավոր լինի Սանկտ Պետերբորգի համալասարանի փորձը ներդնել և ինտեգրել մեր բուհերում, ապա մեր ուսանողները ոչնչով չեն զիջի այնտեղի ցանկացած ուսանողի, ավելին՝ կարող են իրենց հնարամտությամբ և խելացիությամբ գերազանցել նրանցից յուրաքանչյուրին:

- Ի՞նչ խնդիրներ կան, որոնց լուծումը կարող է նպաստել ամբիոնի ծրագրերն առավել արդյունավետ իրականացնելուն:

- Ուզում եմ անդրադառնալ որոշ խնդիրների, որոնց լուծումով է նաև պայմանավորված մեր աշխատանքի արդյունավետությունը. մասնագիտական առարկաների ժամաքանակը զիջում է ոչ մասնագիտական առարկաների ժամաքանակին, ժամաքանակի սղության պատճառով հնարավոր չէ աշխատել առանձին խոցելի խմբերի հետ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան շրջանավարտներ տալու համար, Սոցիալական աշխատանք մասնագիտությամբ ուսանողների առարկայացանկում անհրաժեշտ է մտցնել սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն առարկան, որի դասավանդումը կօգնի ուսանողների կողմից թե՛ ավարտական աշխատանք գրելուն, թե՛ սոցիալական կարիքների հետազոտություն իրականացնելուն: Սոցիալական աշխատանք մասնագիտությամբ ուսանողների մի խումբը կուրսային աշխատանք է գրում սոցիալական հոգեբանությունից, մինչդեռ անհավասար պայմաններ է ստեղծվում խմբի մյուս ուսանողների համար, քանի որ այն ուսանողները, որոնք սոցիալական աշխատանք մասնագիտությունից են գրել կուրսային աշխատանք, առավելություն են ունենում մասնագիտական հմտությունների ծեռքբերման և ավարտական աշխատանք գրելու արդյունքում:

Հավելեմ, որ ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանի կողմից ֆակուլտետի աշխատանքը ճիշտ և գրագետ կազմակերպելու հանգամանքը նպաստում է ամբիոնների համակարգված աշխատանքին: Մենք կարճ ժամանակահատվածում ունեցել ենք բազում ծեռքբերումներ և առաջիկայում էլ ծրագրում ենք նոր անելիքներ:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Հաղթահարված է 30 լեռնագագաթ

«Հարյուր լեռնագագաթ» լեռնագնացների ակումբի հիմնադրման 6-ամյակը: Ակումբը ստեղծվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետում: Հենց սկզբից ակումբի խնդիրը համարվել է երիտասարդներին առավել հայրենաճանաչ դարձնելը, հարազատ հողին ու լեռներին ամուր կապելը, նրանց մեջ կամքի ուժ ներարկելը, ֆիզիկապես առողջ դաստիարակելը: Ակումբը որևէ այլ նպատակներ չի հետապնդում:

Մինչ օրս ակումբին անդամակցած ՀՊՄՀ և այլ բուհերի շուրջ 200 ուսանողներ հաղթահարել են Հայկական լեռնաշխարհի 30 գագաթներ: Առջևում ևս 70-ը սպասում են հարյուրլեռնագագաթայիններին:

Ակումբի 6-րդ տարդեդարձին էր նվիրված Հայկական լեռնաշխարհի Սառցապատ լեռնագագաթի (Իջևանի լեռներ) նվաճումը:

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Պատմական գիտությունների թեկնածու Միքայել Բադալյանը ծնվել է Երևան քաղաքում, ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետը: Վերջերս նա ընտրվել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն: Միաժամանակ դասավանդում է ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

– Էրեբունին իմ տունն է, այստեղ ես անց եմ կացրել իմ կյանքի մի կարևոր ժամանակահատվածը,

-ասում է Միքայել ԲԱԴԱԼՅԱՆԸ

- Միքայել, որքան հիշում եմ, քո ուսանողական տարիներին բավական ակտիվ գործունեություն էիր ծավալում՝ մասնակցելով թե՛ հասարակական, թե՛ մասնագիտական նախաձեռնություններին: Այդ ակտիվությունը շարունակվե՞ց հետագա տարիներին...

- Մանկավարժական համալսարանն ավարտեցի 2008 թվականին, հենց նույն տարվա ամռանից միացել եմ Էրեբունու պեղումներին, դարձել եմ հնագիտական արշավախմբի անդամ՝ սկսելով բանվորի աշխատանքից, երկար տարիներ հետո դարձել եմ արշավախմբի ղեկավար:

2009 թվականի փետրվարի 1-ից աշխատանքի ընդունվեցի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, որի տնօրենն իմ դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանն էր, այժմ՝ ՀՊՄՀ Հայոց պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն է և իմ ուսուցիչը:

Հետագայում աշխատել եմ որպես թանգարանի կրտսեր գիտաշխատող, էքսկուրսավար, գիտաշխատող, «Էրեբունի» արգելոց-թանգարանի «Կարմիր բլուր» մասնաճյուղի վարիչ, նաև համակարգել և այժմ էլ շարունակում եմ համակարգել նույն թանգարանի «Պատանի հնագետ» դպրոցի ուսումնական ծրագիրը, որը տարածաշրջանում իր նախադեպը չունի:

Մայիսի 10-ից արդեն մրցույթով ընտրվեցի Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն:

- Այցելուների հոսքը բավարարո՞ւմ է, ինչպիսի՞ն է երիտասարդ սերնդի հետաքրքրությունը թանգարանի հանդեպ:

- Նախ ասեմ, որ Էրեբունի պատմահնագիտական թանգարանի կազմում են նաև Կարմիր բլուր և Շենգավիթի արգելոց-թանգարանները: Սա մի մեծ կառույց է, որն իր մեջ ներառում է Երևան քաղաքի հնագույն պատմության հուշարձանները:

Մենք այցելուներ ունենում ենք ՌԴ-ից, Իտալիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Չինաստանից և էլի շատ երկրներից: Բայց նրանց թիվը պետք է ավելացնենք՝ զբոսաշրջիկների համար համապատասխան պայմաններ ու միջավայր ստեղծելով... Մենք անընդհատ պետք է ձգտենք թանգարանը դարձնել առավել հրապուրիչ ու գրավիչ, ստեղծենք համապատասխան պայմաններ, որն այցելուների համար իսկապես հավակնի դառնալ գիտակրթական, պատմահնագիտական մշակույթի, զբոսաշրջության և ժամանցային հետաքրքիր կենտրոն:

Թանգարանի բարեկամների մեջ կան խելացի, նորարարական գաղափարներով հանդես եկող երիտասարդներ: Պարզապես մենք պետք է իրականացնենք մատչելի ծրագրեր նրանց համար:

- Այն առումով, որ թանգարանի գործառույթներից մեկն էլ կրթելն է...

-Իհարկե, հենց դրան է միտված նաև «Պատանի հնագետ» դպրոցի աշխատանքների կազմակերպումը: Ուր տարվա ընթացքում 140 շրջանավարտ ենք ունեցել, պետք է հպարտությամբ հավելեմ, որ նրանցից շատերն ընտրում են հնագետի մասնագիտությունը: Սա շատ կարևոր ազդակ է Մանկավարժական համալսարանի հետ կապը պահելու և ամրապնդելու գործում: Ինքս էլ հպարտ եմ, որ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտ եմ և ամեն ինչ անելու եմ հարազատ բուհի շրջանավարտի պատիվը բարձր պահելու, նրա հետ կապերն ամրապնդելու համար:

Բայց մենք շատ անելիքներ ունենք և պետք է կարողանանք թանգարանը որպես պատմական հուշարձան մատուցելը հասցնել այնպիսի մակարդակի, որ այցելուն հեռանա կրթված ու մի բան սովորած...

- Կարծում եմ ժամանակ է պետք նոր տեսլականի իրականացման համար, որպեսզի թանգարան-արգելոցը դառնա տարածաշրջանային կրթական և զբոսաշրջության լավագույն ու ճանաչված կենտրոնը:

- Ճիշտ նկատեցիք, դրա համար տարիներ են պետք: Ես հավատում եմ, որ կգա այդ օրը:

- Հարազատ համալսարանի հետ համագործակցության ի՞նչ տեսլական ունեք...

- ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանի հետ մշակել ենք համատեղ ծրագրեր՝ մոտ և հեռավոր ապագայի համար: Ֆակուլտետի շրջանավարտներին և ուսանողներին մշտապես ներգրավում ենք պեղումների աշխատանքներում՝ նրանց հնարավորություն տալով ձեռք բերել պրակտիկ գիտելիքներ, ինչու ոչ՝ նաև ինչ-որ չափով գումար վաստակել:

Բուհն ունի հետաքրքիր ֆակուլտետներ, որոնց հետ ևս կփորձենք համագործակցել:

- Հնագիտությունն այսօր պահանջվա՞ծ մասնագիտություն է...

- Հնագիտությունը, ես կասեի, բավականին հետաքրքիր և արագ զարգացող գիտաճյուղերից է, որը նաև պահանջում է մեծ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ես կարծում եմ՝ շատերն են մանկուց երազում հնագետ դառնալ, և յուրաքանչյուրի մեջ քնած է հնագետը, մնում է միայն արթնացնել նրան, նաև սեր արթնացնելով յուրաքանչյուրի մեջ դեպի հնագիտությունը, դեպի մեր հարուստ պատմական մշակույթն ու ժառանգությունը:

- Երբևէ երազե՞լ ես Երևանի պատմությունը խորհրդանշող թանգարան-արգելոցի տնօրեն դառնալ...

- Սկզբում երազում էի ֆուտբոլիստ դառնալ, հետո՝ պատմաբան: Երբ ընդունվեցի Պատմահրավագիտության ֆակուլտետ և լսեցի Աշոտ Փիլիպոսյանի դասախոսությունները՝ որոշեցի հնագիտությամբ զբաղվել...

- Առաջիկայում կվերանայվի՞ թանգարանի տոմսային քաղաքականությունը:

- Այո, անհրաժեշտ է վերանայել տոմսերի արժեքները: Նման պատմամշակութային ժառանգություն տեսնելու համար զբոսաշրջիկը պետք է համապատասխան գին վճարի, երբեմն արտասահմանցի զբոսաշրջիկները մտածում են, որ մատուցվող ծառայությունները ևս ցածր մակարդակի կլինեն՝ տոմսի ցածր արժեքին համապատասխան: Գնային խտրություն չի կարող լինել, դա նույնն է լինելու բոլոր այցելուների համար, բայց ունենք անվճար այցելության օրեր ինչպես փոքրերի՝ այնպես էլ մեծահասակների համար, իսկ սահմանամերձ գոտու երեխաների համար այցելությունը թանգարան պետք է անվճար դարձնենք:

- Ի՞նչ շահարկումներ են տեղի ունենում «Զորաց քարեր» կոչվող հնավայրի պեղումների շուրջ...

- «Զորաց քարեր» կոչվող հնավայրի պեղումների շուրջ տարբեր մարդկանց, խմբերի անհատական շահեր են բախվում: Լավ ճանաչելով երկու կողմերին՝ կարծում եմ, որ նախ պետք է զերծ մնալ բոլոր անձնական վիրավորանքներից և հարցի հանդեպ դրսևորել խիստ մասնագիտական մոտեցում: Միայն հստակ փաստերով ու բաց երկխոսությամբ կարելի մոտենալ հարցի հանգուցալուծմանը... Այդ առիթով ուզում եմ հիշել նաև մեզ հետ կապված մի միջադեպ, որը ևս թյուրըմբռնման արդյունք էր: «Կարմիր բլուր» ուրարտական հնավայրում, որը աշխարհի 100 լավագույն պատմական հուշարձանների մեջ է մտնում, իրականացրինք մաքրման աշխատանքներ՝ հավաքելով մեծ քանակությամբ շինարարական աղբ: Աղբահանման մեծ մասը իրականացրեց Երևանի քաղաքապետարանը: Որպես արվածի իրեղեն ապացույց՝ մի մեծ կտոր բետոնե քար թողեցինք այդ վայրում, բայց մի կին ահազանգեց, թե «Կարմիր բլուրը» մաքրելու նպատակով ոչնչացնում են ուրարտական կառույցները և դա ունեցավ շատ վատ հետևանքներ մինչ մենք կհասցնեինք ներկայացնել իրականությունը:

- Ի՞նչ է քեզ համար «Էրեբունի» արգելոց-թանգարանը, աշխատավա՞յր, սիրելի զբաղմո՞ւնք, առաքելությո՞ւն...

- Նախ ասեմ, որ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանն իր արժեքավոր ցուցանմուշներով չափազանց բացառիկ է և կարևոր նշանակություն ունի. այն Երևան քաղաքի ծննդյան վկայականն է: Այստեղ կարելի է հանդիպել աքեմենյան ժամանակաշրջանի գավաթներ, ուրարտական որմնանկարներ, Շենգավիթում կտեսնեք Կուր-Արաքսյան շրջանի իրեր...

Պետք է ասել, որ 1980-ական թվականներից հետո այստեղ ոչինչ չի փոխվել: Փոփոխություններն անհրաժեշտ են, նաև կներմուծվեն նոր տեխնոլոգիաներ, մի խոսքով՝ միջազգային չափանիշներին համահունչ:

Էրեբունին իմ տունն է, այստեղ ես անցկացրել և շարունակում եմ անցկացնել կյանքիս մի կարևոր ժամանակահատվածը...

Ուսանողությանս տարիներին ես գնում էի Էրեբունու թանգարան՝ սեպագրեր էի կարդում, հանգստանում... Բայց մտքովս անգամ չէր անցնում, որ երբևէ կարող եմ դառնալ այս թանգարանի արշավախմբի ղեկավարը կամ տնօրենը:

Ես հավատում եմ՝ կգա այն օրը, երբ «Էրեբունի» արգելոց-թանգարանը կլինի ավելի մատչելի, առավել ճիշտ ընկալված և կհամապատասխանի իր առաքելությանը:

Հարցազրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Արդյունավետ գործընթաց

Ավարտվեց Մանկավարժական համալսարանի Գիտահետազոտական կենտրոնում կազմակերպված ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) ստացման համար վերապատրաստման 100 ժամ տևողությամբ դասընթացը:

Մասնակիցներին շնորհավորեց և վերապատրաստման հավաստագրեր հանձնեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Մայիսի 27-ից մինչև հունիսի 15-ը անցկացված դասընթացի վերջնարդյունքում ստացած հավաստագրերով մասնակիցները հնարավորություն կունենան մասնակցել հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի ստացման համար կազմակերպվող քննություններին:

Ռեկտորն ընդգծեց, որ վերապատրաստվողների առաջարկներն ու նկատառումները կբացահայտեն վերապատրաստման ուժեղ և թույլ կողմերը, կազմակերպման ձևն ու բովանդակությունը, պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածությունը:

Վերապատրաստվածները գոհ էին դասընթացի պատշաճ կազմակերպման մակարդակից, ինչի համար շնորհակալական խոսք հղեցին բուհի ղեկավարությանը և դասընթացի կազմակերպիչներին:

Նրանց կարծիքով՝ նման վերապատրաստումները թույլ են տալիս հետահայաց վերլուծել աշխատանքային գործունեությունը և մշտապես սովորել և որ մանկավարժ լինելու համար պետք է ժամանակ առ ժամանակ նստել աշակերտական կամ ուսանողական նստարանին:

Եղան նաև առաջարկություններ. վերապատրաստվողներն առաջարկեցին ավելացնել գործնական կարողությունների զարգացմանը միտված դասաժամերը:

Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանը հպարտությամբ է ներկայացնում մրցույթի արդյունքում Մանկավարժական համալսարանին իրավունք վերապահված վերապատրաստման արդյունավետ գործընթացի մասին, որը պայմանավորված էր հատուկ այդ նպատակով ստեղծված ծրագրի, կոմպետենտ և արհեստավարժ պրոֆեսորադասախոսական կազմի առկայությամբ, ինչպես նաև հմուտ ղեկավարմամբ: Պարբերաբար իրականացվող մշտադիտարկումները հնարավորություն են ընձեռել արագորեն արձագանքել արձանագրված բացթողումներին՝ ճիշտ ուղղորդելով գործընթացը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը, որը ծրագրի վերապատրաստող մասնագետներից է, դպրոցը հաջողությամբ ղեկավարելու համար կարևորեց տնօրենի մարդկային բարձր որակները, արագ կողմնորոշվելու և լսելու կարողությունները, ապա հաջողություններ մաղթեց վերապատրաստման դասընթացի մասնակիցներին:

Դպրոցի տնօրենների թեկնածուների մասնագիտական վերապատրաստման դասընթացը գնահատելու համար կազմակերպվել էր նոր ձևաչափ. մասնակիցները լրացրել էին ամփոփաթերթեր, վերհանել կազմակերպման ձևն ու բովանդակությունը, պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածությունը, ներկայացրել իրենց առաջարկներն ու նկատառումները, ինչը դասընթացի կազմակերպիչներին հնարավորություն կտա շարունակաբար կատարելագործել վերապատրաստման գործընթացը:

Նոր ձեռքբերում ՀՊՄՀ թանգարանում



ՀՊՄՀ թանգարանը կրկին համալրվեց նոր նմուշով, որն այսուհետ տեղ կգտնի համալսարանի թանգարանի մշտական ցուցադրության մեջ: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, քաղաքացիական պատգամավոր, Բնագիտական թանգարանի հիմնադիր Անտոն Անտոնյանի (1884-1938) կողմից 1933-1935 թթ. գրված ձեռագիր տետրը վերաբերվում է բնագիտական թանգարանի գործունեության նկարագրությանը:

Այս նմուշը հրաշալի հնարավորություն է համալսարանի թանգարանագետ և պատմաբան ուսանողների համար, ովքեր առնչվում են այս հարցերին այն վերծանելու, ուսումնասիրելու և հանրությանը բացահայտելու համար:

«Քննական» գորգ

Մանկավարժական համալսարանի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի բաժնի շրջանավարտ Անժելիկա Ավետիսյանի ավարտական աշխատանքը նվիրված է Մանկավարժական համալսարանին: Ավարտական աշխատանքը «Գործվածքի դիզայն» առարկայի շրջանակներում արված գորգ է, որը ներկայացնում է Մանկավարժական համալսարանի և Գեղարվեստական կրթության ֆակուլտետի պատմությունը՝ նոր ժամանակաշրջանը

բնութագրող և փաստող խորհրդանշական զարդանախշերով:

Գորգում իր արտահայտությունն է գտել դաստիարակության, կրթության և գիտության գործոնների միասնականությունը, որը առաջնային է մարդու ձևավորման, զարգացման և կայացման գործում:

«Պահպանելով հայկական ավանդական գորգի հորինվածքային կառուցվածքը՝ ուսանողուհին գորգի միջոցով ցանկացել է փաստել այս ժամանակաշրջանի նորագույն կրթական և գիտատեխնիկական հնարավորությունները, որ ունի Մանկավարժական համալսարանը»,-ասում է դասախոս Նաիրա Մխիթարյանը:

Ուսանողուհին հին գորգը նորովի է մատուցել՝ ստացած գիտելիքներին գաղափարական շունչ տալով: Խորհրդանշական գորգի միջոցով նա կամրագրի իր ավարտական որակավորումը քննական հանձնաժողովի առաջ:

Մատչելիությունն ու հավասար հնարավորությունների ստեղծումն այսօր կրթական հաստատությունների կարևորագույն խնդիրներից են: Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի տիֆլոմանկավարժություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողական խորհրդի անդամները հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Մարինե Մկրտչյանի նախաձեռնությամբ ևս մեկ քայլ արեցին համալսարանն ավելի մատչելի դարձնելու ուղղությամբ: Ուսանողները համալսարանի առաջին ու վերջին աստիճանները դեղին գույնով ներկեցին՝ տեսողության խնդիրներով անձանց հնարավորություն տալով ավելի ազատ ու հեշտ տեղաշարժվել:

ՔՆՆԱԾՐՋԱՆ

Վերջին օրերն են հարազատ համալսարանում. քննական հուզմունքն ու անհանգստությունը, ավարտելու թախիծը և ուրախությունը միախառնվել են, դարձել հետագա ճանապարհը կանխորոշող արահետ, որով մեր շրջանավարտները պատրաստվում են առաջ շարժվել... Ոչ մի ճանապարհ դյուրին ընթացք չունի, առանց խոչընդոտների հաղթահարման չես հասնի այն ամենին, ինչին ձգտում ես, քանզի պետք է համատեղես գիտելիքներդ ու ջանքերդ և ձգտես երազանքներիդ իրականացմանը...

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է 2019-2020 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելություն

Դիմումներն ընդունվում են՝

Առկա ուսուցում՝ հունիսի 10-ից օգոստոսի 25-ը

Հեռակա ուսուցում՝ հունիսի 10-ից սեպտեմբերի 10-ը

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը

1. Դիմում-հայտ (գրվում է տեղում)
2. Դիպլոմի և դիպլոմի հավելվածի (միջուկի) բնօրինակը և պատճենը
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն
5. 4 լուսանկար (3x4 չափսի)
6. Տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների ցուցակը (դրանց առկայության դեպքում):

Հասցեն՝ ք. Երևան, Խանջյան 5, 110 սենյակ, հեռախոս՝ 59 70 69, ընդունող հանձնաժողով:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է 2019/2020 ուսումնական տարվա հայցորդական (հեռաբուհական) կրթության ընդունելություն (վճարովի հիմունքներով)

Հայցորդական (հեռաբուհական) կրթության ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը:
2. Մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին)
3. Անձնագրի պատճեն
4. 2 տպագրված հոդված
5. 4 լուսանկար (3x4 չափի)
6. Ինքնակենսագրություն (CV)
7. Աշխատանքային գրքույկի պատճեն (եթե առկա է)
8. Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 1-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն՝ 318 սենյակ, հեռ. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 27.06. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ